

# ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՃԱՌԸ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԿՈՂՄՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԵՐՐՈՐԴ ԿՈՆՖԵՐԱՆՍՈՒՄ

Այս հավատացյալ ժողովրդի և մեր կողմից ի սրտե ողջունում ենք խաղաղության կողմնակիցների Համախորհրդային Երրորդ կոնֆերենցիայի բացումը և նորա ներկա պատգամավորներին:

Տարիներ ի վեր խոշոր պայքար է գնում աշխարհում խաղաղության և պատերազմի կողմնակիցների միջև:

Այդ պայքարը կարելի է բնորոշել որպես հակամարտություն մի կողմից ֆիզիկական ուժի ու բռնության և մյուս կողմից՝ հումանիստական վսեմ գաղափարների միջև:

Այդ պայքարը նոր չէ, նա սկիզբ է առել Քրիստոնեության արշալույսին, սակայն՝ այնօրից ցայսօր՝ հումանիստական վսեմ գաղափարները քարոզվել են միայն և, դժբախտաբար, իբրև քարոզ էլ մնացել են ցայսօր:

Այսօրվա պայքարը— այդ վսեմ գաղափարների կենսագործման պայքարն է, որ վարում է Խորհրդային Միության մեծ ժողովուրդը հանճարեղ ՍՏԱԼԻՆԻ գլխավորությամբ: Եվ այդ պայքարը, ժողովուրդների մեծ Առաջնորդի ցուցման համաձայն, իր ձեռքն է առել մարդկությունը և ղեկավարությունը իրավամբ վստահացել իր լավագույն զավակներին՝ Խաղաղության Համաշխարհային Խորհրդին:

Ամբողջ աշխարհը լարված սպասում է՝ թե ի՞նչ պիտի լինի այս պայքարի վախճանը: Կասկածից դուրս է, որ պայքարը պիտի որոշվի հօգուտ խաղաղության. նա պիտի վերջանա խաղաղության, եղբայրության և համագործակցության գաղափարների հաղթանակով:

Ինչո՞ւ. որովհետև հանուն խաղաղության, եղբայրության և համագործակցության մղվող պայքարը համապատասխանում է ողջ մարդկության բաղձանքին ու շահերին, ուստի և աշխարհում ամենուրեք պայքարում են ժողովրդական բոլոր խավերն ու մտավորականությունը, որովհետև պայքարողների ներշնչողն ու գլխավորողը Խորհրդային Միությունն է, որ միշտ եղել է ո՛չ միայն իր սոցիալիստական Հայրենիքի հավատարիմ ու անխոնջ զինվորը, այլև՝ իր ծագման օրից, անձնվիրաբար պայքարել է խաղաղության, ազգերի միջև բարեկամության հաստատման և ընդհանուր մարդկության կուլտուրայի ու քաղաքակրթության պաշտպանության, ինչպես և մարդկության ազատության և անկախության համար, որովհետև Խորհրդային Միության հերոսամարտ ժողովուրդների և ողջ մարդկության ներկա պայքարը ղեկավարում է

մարդկության հարազատ բարեկամ ու աննկուն կամքի տեր մեծ ՍՏԱԼԻՆԸ, որ՝ իր երկարամյա ղեկավարության ընթացքում՝ ամենատեսակ դժվարությունների դեմ պայքարել և հաղթող է հանդիսացել:

Եվ վերջապես, թվում է թե՝ պատերազմասեր տարրերն ու պետությունները ի վերջո կհամոզվեն, որ Խորհրդային Միությունը իսպառ չի՛ մտածել և չի՛ մտածում ագրեսիայի մասին, այլ միայն միութենական իր ժողովուրդների տնտեսական զարգացման ու բարեկամության և համայն մարդկության երջանկության մասին: Նոքա գուցե կըմբռնեն նաև, որ խաղաղության գաղափարով մոլեռանդագին ներշնչված համայն մարդկության դեմ մղվող պատերազմը, ինչպես միշտ, այժմ ևս պարտությամբ պիտի վերջանա և՝ ազատվելով երազական Ծրագրերից՝ խոհեմություն կունենան զենքերը վայր դնելու:

Այսօրվա խաղաղության ու պատերազմի կողմնակիցների պայքարի առթիվ՝ թող ներվի Մեզ վշտով հայտարարել, որ քրիստոնեական կրոնի գործադիր մարմինը՝ Եկեղեցին, ի բաց առյալ հին դարերը, երբ Եկեղեցին սիրո և եղբայրության գաղափարները որոշ չափով կենսագործել է՝ աստվածահաճո հաստատություններ հիմնելով և իր պաշտոնյաների ու հավատացյալների հանուն գաղափարի մարտիրոսացմամբ, սակայն՝ միջին դարերից սկսած ցայսօր, ի վիճակի չի եղել իր անմիջական դերը կատարելու, այն է՝ կյանքում կենսագործելու քրիստոնեության վեհ գաղափարները՝ սիրո, եղբայրության և խաղաղության, որ Քրիստի մարդեղության էական նպատակն է եղել: Քրիստի միակ կամքն ու նպատակն է եղել հաստատել սիրո գաղափարի մարմնացումը աշխարհում: Այս գաղափարը եղել է նաև Քրիստի հիմնական վարդապետությունն ու քարոզը: Նա կամեցել է երկնքի կամ՝ որ նույնն է՝ Աստուծո թագավորություն հիմնել երկրի վերա, այն է՝ մարդկությունը կապել միմյանց հետ եղբայրության ու սիրո զգացմունքով և հաստատել աշխարհում համերաշխ, խաղաղ ու երջանիկ կյանք:

Հենա այս գաղափարն է, որ քրիստոնեական Եկեղեցին չի կարողացել կենսագործել անցյալում: Սույնպես նաև մեր ժամանակի համաշխարհային երկու պատերազմի ընթացքում հանդես չի եկել որպես կազմակերպված հաստատություն, իր հավատացյալների հոծ բազմությամբ, հօգուտ խաղաղության՝ մարելու համար պատերազմի հրդեհը:

Մենք նպատակահարմար ենք գտնում, և համոզված ենք, որ եթե Կաթոլիկ, Բողոքական և Պրավոսլավ մեծ Եկեղեցիները և մնացյալ փոքր ազգերի ազգային քրիստոնեական Եկեղեցիները, ինչպես նաև մյուս կրոնները համախմբվեն ու կազմակերպվեն և խմբովին հանդես գան հօգուտ խաղաղության և ընդդեմ պատերազմի, ո՛չ միայն դրական արժեք կունենա և խաղաղության հաջողության կնպաստե, այլև կբարձրանա Եկեղեցու հեղինակությունը և կշեշտվի նորա անհրաժեշտությունը կյանքի համար:

Հին ժամանակներից սկսած մարդկությունը միշտ հետամուտ է եղել զարգացնելու գիտությունը, տեխնիկան և կուլտուրան՝ համարելով այն մարդկային կյանքի երջանկության միակ աղբյուրը: Սակայն՝ ինչպես պատմական փաստերը, նույնպես և ներկա քաղաքական վիճակը գալիս են հակառակը ապացուցանելու և մարդկությունը հուսախաբելու: Աշխարհի մեծ պետությունները՝ Անգլիան, Ֆրանսիան, Ամերիկան, Իտալիան հրահրում են նոր համաշխարհային պատերազմ, որ կարող է աշխարհը աչ ու սարսափի մատնել, մարդկային մտքի ու հոգու ստեղծագործությունները ոչնչացնել, անթիվ անհամար մարդկային կյանքերի զոհվելու պատճառ դառնալ, աշխարհն ավերել ու կործանել և մարդկային կյանքը լաց ու կոծի և սուգի մատնել: Ցա-



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍՈՒՄ
ՃԱՌ ԽՈՍԵԼԻՍ

վով նշում ենք Մենք հիշյալ մեծ պետությունների այս գայթակղեցուցիչ ընթացքը: Եվ ի՞նչպես ուրախ կլիներ աշխարհը, եթե նոքա հետադարձ ակնարկ ձգեին իրենց գործելակերպի ու ծրագրի վերա, գուցե՝ ապագայի խղճի խայթից ազատվելու համար՝ նահանջեին իրենց անխիղճ ծրագրից:

Վերոհիշյալ անցանկալի երևույթների հանդեպ ունենք նաև հետևյալ միխթարական հեռանկարը: Պատմությունը մեզ ուսուցանում է, որ բոլոր նոր խոշոր գաղափարները սկզբում թույլ են եղել և նոցա պաշտպանները հալածվել են, տուժել են, մարտիրոսացել են. բայց... ի վերջո նոքա հաղթանակել են և տիրել աշխարհին, որովհետև խոշոր գաղափարները խոշոր ճշմարտություն են պարունակում, որ իր բոլոր ժամանակակիցներին անխտիր ըմբռնելի չի լինում, սակայն ժամանակի ընթացքում ըմբռնելի է դառնում և հաղթանակում է:

Խաղաղության շարժումն էլ խոշոր շարժում է և մեծ ճշմարտություն է պարունակում իր մեջ. ուստի և նորա պաշտպանները պիտի տուժեն և տուժում են— տուժում են Խաղաղության Համաշխարհային Խորհրդի անդամները, տուժում են բազմաթիվ անհատ քաղաքացիներ, և վերջապես մեծապես տուժում են կորեացիները, որոնց մխիթարությունը պիտի լինի ողջ աշխարհի համակրանքը հանդեպ իրենց գաղափարական հերոսամարտի և հայրենի ժողովրդի ազատությունն ու անկախությունը, որ իրական պետք է համարել:

Խաղաղության պայքարը մխիթարական է նաև ողջ մարդկության համար, որովհետև այս խոշորագույն պայքարը, որ անշուշտ պիտի պսակվի հաղթությամբ, սկիզբ պիտի դնե մի նոր դարաշրջանի, երբ՝ ուժի և աշխարհակալական ոգու փոխարեն՝ հանդես պիտի գա աշխարհում եղբայրության և համագործակցության ոգին, և միջազգային ու միջպետական խնդիրները պիտի լուծվին ոչ զենքով և բռնությամբ, այլ բանականությամբ և խղճով, որի հետևանքով աշխարհը խաղաղ կյանք պիտի վայելե և՝ աշխատանքի ու ստեղծագործության շնորհիվ, մարդկությունը իր երջանիկ կյանքը կռե ու կոփե:

Այս նոր դարաշրջանի կարապետն է հանդիսանում Խորհրդային Միությունը իր հանճարեղ Առաջնորդի՝ Ի. Վ. ՍՏԱԼԻՆԻ գլխավորությամբ, որի անունը և գործերը պատմությունը պիտի անմահացնե և մարդկության անեկդ երախտագիտական զգացմամբ հավերժանա:

Հայ Եկեղեցին միշտ և հատկապես վերջին տարիները քարոզել և քարոզում է խաղաղության վեհ և մարդասեր գաղափարը: Մենք կոչ ենք արել և կոչ ենք անում միշտ հայրենասեր հայ հավատացյալ ժողովրդին հարել խաղաղության կողմնակիցներին և՝ խմբվելով նոցա հաստատությանց շուրջը՝ աջակցել հաճուն խաղաղության և եղբայրության նոցա մղած հզորագույն պայքարին: Եվ հաճությամբ կարող ենք նշել, որ ամենուրեք՝ ինչպես Խորհրդային Միության սահմաններում, նույնպես նաև արտասահմանյան գաղութներում հայ հավատացյալ ժողովրդի կողմից Մեր կոչերը ջերմապես ընդունվել և արձագանք են գտել:

Խաղաղության պայքարը մեր ժամանակի հզորագույն և անհաղթելի շարժումն է:

Թող Տերն օրհնե ու հաջողությամբ պսակե այդ խոշոր ձեռնարկը: